# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՈՒՐԱՐՏՈՒ ԱԱԿ ԲԲԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 8 | ՈՒՐԱՐՏՈՒ Ա.Ա.Կ. ԲԲԸ | hh | ՈՒՐԱՐՏՈՒ Ա.Ա.Կ. ԲԲԸ | Մեդալը բաղկացած է չժանգոտվող ցինկապատ պողպատե կախիչից և դրան կապօղակով ամրացած ճառագայթաձև հիմքից: Կախիչը ասեղային ամրակով. Արտադրվում է առնվազը 75% պղնձի պարունակությամբ համաձուլվածքից, փայլատ մակերես ստանալու տեխնոլոգիայով (էլեկտրոէռոզիոն մշակման մեթոդով ստացվող փայլուն մատային մակերես Ն2 սանդղակով), դրոշման եղանակով, անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում 900-ից բարձր հարգի ոսկով՝ նվազագույնը 0,5 մկմ հաստությամբ: Հիմքի արտաքին չափսերը հորիզոնական և ուղղահայաց ուղղությամբ 42 մմ, հաստությունը՝ 2մմ (շեղում՝ +/- 0.1մմ): Մեդալն իրենից ներկայացնում է ոսկեգույն հավասարակողմ ութաթև աստղ, որին արտագծված շրջանագծի տրամագիծը 42 մմ է, կողմերը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ռոմբավորված են արևը խորհրդանշող 1 մմ լայնությամբ սրածև ճառագայ¬թներից կազմված ռոմբիկներից: Կենտրոնում ութաթև աստղի վրա գրված է «15» թիվը, ութաթև ոսկեգույն աստղը գտնվում է կապույտ ֆոնի վրա: Վահանի եզրագծի վերևի մասում գրված է <<ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>>, իսկ ներքևի մասում` <<ՀՀ ԱԻՆ ՓԾ>> բառերը: Մեդալն ունի վեցանիստ սեղանաձև կախիչ` 30X45 չափսերով, վրայից ուղղանկյունաձև ոսկեգույն շերտաձողիկ` «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությամբ: Կախիչի դարձերեսին ամրացված է մեդալը հագուստին ամրացնելու հարմարանք: Կախիչը` կապույտ (CMYK 100;100;6;31), որի կենտրոնով իրարից 2 մմ հեռավորությամբ անցնում են երեք ուղղահայաց 2 մմ լայնությամբ դեղին (CMYK 4;20;95;13) զոլակներ: Մեդալի դարձերեսին հորիզոնական մեկ տողով գրված են «ՀՀ ԱԻՆ MES RA» բառերը և լազերային եղանակով դաջվում է մեդալի համարը (սկսած 0995-ից): Կատարվող գրառումների անվանանիշը 3.2 մմ ուղղահայաց ուղղությամբ, տառատեսակը ` Arial Armenia: - Մեդալների արտաքին տեսքը պետք է համապատասխանի համաձայնեցված նմուշի արտաքին տեսքին` ունենալով նույն համաձուլվածքը, ռելիեֆային պատկերները, գրվածքները, ժապավենը և գունավորումները: Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ դրոշման եղանակը ապահովում է մեդալների միանմանությունը և չափսերի բարձր ճշտությունը: Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի շեղումը ոչ ավել քան 0.1 մմ: Մեդալի դարձերեսին դրոշմման եղանակով դաջվում է արտադրողի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ապրանքային նշանը: Չի թույլատրվում ՝ - Պատկերների և գրվածքների աղավաղում: - Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր: Մատակարարը մեդալների նմուշների եռաչափ (3D) մոդելավորված նկարները և հետո նմուշները պետք է նախապես համաձայնեցնի պատվիրատուի հետ: Մեդալի հետ տրվում է վկայական (էսքիզ 8): |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

УРАРТУ ТПК АООТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 8 | | | | |